

թեան համար վաղուց նշանաբան է դարձել „one man, one vote“ (մի մարդ—մի ձայն) դարձուածքը:

Եւ գուցէ այդ մտքով ռեֆորմը շատ էլ հեռու չէ:

Գէորգ Ալթունեան

### ՆԱԽԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Ռուսաստանի հին խայտառակ ընժիմի ստեղծած աղէտներէց մէկն էլ Բազուի նաւթարդիւնաբերութեան կործանումն էր, որի խոր ազդեցութեան հիմքերը ժողովրդի կեանքի զանազան շերտերում դեռ երկար ժամանակ չեն անհետանալու... «Нефть. Д.» № 16—17-ից իմանում ենք, որ օգոստոսեան թաթարական վայրագութիւնների պատճառով այրուել են 1996 բուրգեր (վըշկա), այսինքն բոլոր բուրգերի 58,50/0: Այդ բուրգերից օրեկան քաշում էր 920,994 պուդ նաւթ: Այրուած բուրգերի արժէքն է 12 միլլ. ռուբլի: Այրուած աշխատանոցների, բնակարանների, նաւթամբարների և այլ կայքերի արժէքն է 13 միլլիօն: Այդտեղ չեն հաշուած դադարած աշխատանքների պատճառով վարպետների, կապալառուների և բանուորների կրած սոսկալի ֆնասները: Ներկայ նաւթարդիւնաբերութիւնը վերականգնելու համար պահանջւում է 40 միլլիօն, մարդկային զոհերը չհաշուած: Այդպիսի ֆնասներ հասցնող թուրք աւազակային վոհմակները և նրանց նպաստող պոլիցիան և բիւրոկրատիան ոչ մի պատիժ չկրեցին: Բալխանիի, Սաբունչիի, Ռամանիի, Չարբատի թուրք «երկրագործները» կը մնան իրանց տեղերում, հանգիստ վայելելով իրանց յափշտակած և շարունակ դամոկլեան սրի պէս կախուած լինելով գլխակոր հայ նաւթարդիւնաբերողների և բանուորների գլխին: Չարմանալի չէ որ Բազուի արդիւնաբերական ապագայի մասին վարդազոյն հեռանկար դժուար է ստեղծել: Առանց այն էլ նաւթարդիւնաբերութիւնը Ռուսաստանում դանդաղ էր զարգանում, այլ երկրների հետ համեմատած, մի բան, որ երևում է հետևեալ աղիւսակից: Նաւթ ստացւում էր.



|              | 1902             | 1903         | 1904         |
|--------------|------------------|--------------|--------------|
| Ամերիկա      | 10.980 հազ. տոնն | 12.557 հ. տ. | 15.000 հ. տ. |
| Ռուսաստան    | 10.950 » »       | 10.320 » »   | 10.600 » »   |
| Ջոնդեան կղզ. | 732 » »          | 830 » »      | 1000 » »     |
| Գալիցիա      | 576 » »          | 713 » »      | 827 » »      |
| Ռումանիա     | 310 » »          | 384 » »      | 496 » »      |
| Հնդկաստան    | 209 » »          | 325 » »      | 404 » »      |
| Այլ երկրներ  | 270 » »          | 250 » »      | 250 » »      |

Դժուար չէ երևակայութեամբ շարունակել այդ թուերը և 1905 թուականի համար...

Թէ ինչ կերպ ազդեց մեր երկրի խառնակ դրութիւնը նաւթի արտահանութեան վրայ, այդ երևում է հետեւալ թուերից: 1904 թ. Անգլիա ներմուծուած կերոսինից 520/0 Ռուսաստանից էր, իսկ 45 0/0 Ամերիկայից, իսկ 1905 թ. Ռուսաստանից 300/0, Ամերիկայից արդէն 650/0: Այդպէս կը լինի, երևի, և միւս երկրներում: Ի դէպ մեր հարեան Թւրքիան ստանում էր Ռուսաստանից 2,650,000 արկղ կերոսին գլխաւորաբար երեք ֆիրմաներից. Բոտալիլի, Մանթաշեանի և Սիդերիդիս-Արվանիտիդիսի այսինքն հրէական, հայկական և յունական ֆիրմաներից: Տեսնենք յայտնի առածը այդ երեք աղբութիւնների ճարպիկութեան մասին Թնչպէս կարգարանայ իրականութեան մէջ...

Իր ժամանակին մենք մեր ընթերցողներին ծանօթացրել էինք Անդրկասպեան երկրում, Ֆերգանում, սկսած նաւթարդիւնաբերութեան հետ: Յիշեալ թերթից իմանում ենք, որ այն օրից երբ Միջին-Ասիական երկաթուղու ֆերգանեան ճիւղն է կառուցուել, նաւթային ձեռնարկութիւնները Ֆերգանում զգալի կերպով կենդանացել են: Այդտեղ ամենամեծ նաւթարդիւնաբերական ձեռնարկութիւնն է «Ֆերգանեան նաւթարդիւնաբերական ընկերութիւնը», որի գլուխ է կանգնած ինժեներ Կովալեւսկին: Ընկերութիւնը ունի 114 դեմեատին հող, 1904 թուի սեպտեմբեր ամսում սկսեց խփել առաջին շտրուանը: Նաւթահորերը գտնուում են Միջին-Ասիական երկաթուղու Վանովսկայա կայարանից 20 վերստ հեռու, Զիմիճի դիւղի մօտ: Եւ այժմ այդ կայարանից մինչև նաւթահանքերը խողովակներ են շինուած, այնպէս որ օրը 38,000 պուդ նաւթ է հասցնում կայարանը, ուր շինուած են նաւթաւազաններ և զանազան յարմարութիւններ՝ վազոնները նաւթ լցնելու համար:

Այդ ընկերութիւնը 1905 թ. մայիսի 1-ին պայման է կապել Օրենբուրգ—Տաշկենտեան երկաթուղու հետ մի միլիոն նաւթ 25 կոպ.—ով Վանովսկայաում յանձնելու: «Ֆերգանեան



նաւթ. ընկ.» աշդուլութիւնը առաջ բերաւ «Րիշտան» անունով մի ընկերութիւն, որի անուանական 100 բուլլիանոց պայերը այժմ Կոկանդի շուկայում 400 բուլլով են վաճառոււմ, ի հարկէ անհիմն ածիօտաժի շնորհիւ, որից այնքան միամիտներ տուածեցին մի ժամանակ «բախտաւոր» Բազուում:

S.

## ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐԷՐ

կամ

ԱԶԸՐԲԷՅԶԱՆՆԵՐ<sup>1)</sup>

### 1. Որտեղից են եկած Անդրկովկասի թուրքերը

Իրանեան թուրքերի ասելով հասկանում ենք մենք բառի լայն իմաստով թուրք ժողովրդի այն հատուածը, որ ապրում է այժմ հին Իրանի հողի վրայ. այդտեղ է հաշուած և Անդրկովկասը մինչև Դերբենդ:

Եթէ ոչ անկարելի, դո՛ւնէ շատ դժուար է որոշելը, թէ երբ է սկսել այս օտար տարրը Իրանում ազդեցութիւն ձեռք բերել: Հիւսիսային Իրանը, այսինքն խորասանը, Կասպից Ծովի հարաւային ափերը և Անդրկովկասը պէտք է որ դեռ անյիշելի ժամանակներից ենթարկուած լինէին հատ-հատ թուրք ցեղերի ու հրոսակների յարձակմանը, որոնք իբրև կռիւ ու աւար սիրող թափառականներ ընկնում էին մերկ տափաստաններից դրացի քաղաքակիրթ երկրների վրայ՝ այնտեղի իրանական նստակեաց ժողովուրդների աշխատանքի արդիւնքովը իրանց ողորմելի ապրուստը քիչ մեղմելու:

Պարթևների դեռ չպարզուած ազդեցողական կապերից այստեղ եզրակացութիւններ հանել չենք ուզում, բայց և այնպէս

<sup>1)</sup> Das Türkenvolk